ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Վաչագան Ավագյան

Նշանակալից է Արշակ Չոպանյանի դերը հայ մշակույթի պատմության մեջ: Նշանակալից է թե՛ երկարակեցության (շուրջ կեսդարյա անխոնջ ու անդուլ աշխատանք), թե՛ գրականության, նրա անցյալի ու իր ժամանակի ընթացքի նուրբ ու խորը դիտարկումներով, թե՛ հայ և համաշխարհային մշակույթի խաչաձևումների բացահայտումներով և թե՛ անաղարտ ու մաքուր, պատեհապաշտությունից դուրս, արդար նվիրումով իր ազգին ծառայելու անմարելի ձգտումներով:

Չոպանյանի վաստակը բացառիկ է հատկապես քննադատության ու բանասիրության ասպարեզներում: Նրա հզոր գրչով կյանքի կոչվեցին հայ հին մշակույթի շատ մոռացված արժեքներ, արևմտահայ գրականության մեջ նա հիմք դրեց գիտական քննադատությանը, սկզբնավորեց մենագրության ժանրը՝ տալով դասական գրողների ստեղծագործությունների ուսումնասիրության ինքնատիպ ու հիանալի օրինակներ:

Չոպանյանի մենագրական լավագույն աշխատություններից մեկը՝ «Մկրտիչ Պեշիկթաշլեանի կեանքն ու գործը» գիրքը, վերջինիս մասին եղած լավագույն ուսումնասիրություններից է: Այն լույս տեսավ 1907 թվականին Փարիզում: Դա ըստ էության Պեշիկթաշլյանի մասին առաջին առավել ամբողջական բանասիրական խոսքն էր, որ առ այսօր նրա կյանքի ու գործի, նրա ժամանակի ու միջավայրի ուսումնասիրության թերևս միակ ու ամենահավաստի աղբյուրն է[1]:

Մկրտիչ Պեշիկթաշլյանը Չոպանյանին հետաքրքրում էր դեռևս 1890-ական թվականներից[2]. այդ հետաքրքրությունը պայմանավորված էր ոչ միայն Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերության վարչության՝ գրականագետին Պեշիկթաշլյանի կյանքի մասին աշխատություն գրելու առաջարկությամբ, այլև

---

1 Տե՛ս **Մնացականյան Լ.**, Քսաներորդ դարասկզբի արևմտահայ գրական քննադատությունը, Եր., 1990, էջ 262:

2 Տե՛ս **Չօպանեան Ա.**, Թատերգութիւնը մեր մէջ, «Մասիս», 1893, № 3975: Մկրտիչ Պէշիկթաշլեանի քերթուածներն ու ճառերը, ծանօթագրութիւններով հրապարակեց Ա. Չօպանեան, Փարիզ, 1904:

ավելի շուտ «այդ ոսկի սրտով մարդուն» կյանքի և գործի նկատմամբ քննադատի անձնական «գորովալից հիացմամբ»[1]:

*Մկրտիչ Պեշիկթաշլյանին անդրադառնալը Զոպանյանի համար ուներ կրկնակի նշանակություն, որ 1899 թվականին գրված նամակներից մեկում պարզում է ինքը՝ հեղինակը. «Ես կփափագիմ **ամբողջական, կատարյալ գործ** մը արտադրել, որովհետև այդ նյութը ինծի շատ սիրելի է, և ատկից զատ շատ բազմակողմանի և դժվարին է, պատկերն ըլլալով ոչ միայն անձի մը, այլ ամբողջ շրջանի մը հոգեբանության»*[2]:

Հենց սկզբից էլ գրականագետը նպատակ էր ունեցել ձեռնարկել ոչ միայն Պեշիկթաշլյանի կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը, այլև այդ ուսումնասիրության միջոցով կամ նրան զուգահեռ վեր հանել 19-րդ դարի 50–60-ական թվականների արևմտահայ հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի ողջ պատկերը, որը և գերազանցորեն իրագործել է: Ինչպես նկատում է Լ. Մնացականյանը, այս ուսումնասիրության մեջ դրսևորվել է Զոպանյանի քննադատական «բնավորության» մի ուրիշ կողմը՝ հասարակական ու մշակութային կյանքի բազմազան ամբողջությունը մեկ հայացքով ընդգրկելու ձիրքը և բանասեր հետազոտողի հմտությունը[3]:

Հիրավի, այս ուսումնասիրությունը պատմական ժամանակաշրջանի ու միջավայրի իր լայն ընդգրկմամբ և արտացոլման խորությամբ դարձել է 1850–60-ական թվականների արևմտահայ կյանքի մի յուրօրինակ տարեգրությունը:

Գրքի հենց «Ներածութեան» մեջ Զոպանյանը շեշտում է Մկ. Պեշիկթաշլյանի կյանքին ու գործունեությանը անդրադառնալու կարևորությունը, մատնանշում նպատակները: Գրքի ներածությունը որոշ իմաստով ծրագրային նշանակություն է ստանում հետագա ողջ բովանդակության համար, և որը միաժամանակ օգնում է ճիշտ հասկանալու գրականագետի՝ պատմական ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական և մշակութային իրադարձությունների, դեպքերի ու դեմքերի, թվերի, փաստերի, անունների մանրամասն ու հանգամանորեն ներկայացնելու միտումը. «Կարեւորութիւնը,– գրում է Զոպանյանը,– զոր այդ գործին ու կեանքին ծանօթացումը ունի ինքնին, կը շեշտուի ու կը բազմապատկուի այն տեսակէտով, որ այդ կեանքին ու այդ գործին ուսումնասիրութիւնը իր հետ պիտի բերէր ի հարկէ ուսումնասիրութիւնը մեր ժամանակակից պատմութեան ամենէն նշանակալից, ամենէն շահեկան շրջաններէն մէկուն: Պէ-

---

[1] **Զոպանյան Ա.**, Նամականի, Եր., 1980, էջ 49:

[2] Նույն տեղը, էջ 61:

[3] **Մնացականյան Լ.**, Քսաներորդ դարասկզբի արևմտահայ գրական քննադատությունը, Եր., 1990, էջ 262:

շիկթաշլեանի կեանքը պատմել ու գործը բացատրել՝ գրեթէ իր ժամանակակից ազգային բովանդակ կեանքին պատկերը գծել ըսել է, որովետեւ Պէշիկթաշլեանի դերը՝ այդ շրջանին մէջ ի յայտ եկող երեւոյթներուն նոյն իսկ այդ շրջանը ծնուցանող տարրերուն ամենէն կարեւորներէն ու բազմադիմիներէն մէկն է»[1]:

Ընդգծվում է նաև Պեշիկթաշլյանին անդրադառնալու հեղինակային միտումի մյուս կողմը: Բարձր գնահատելով բանաստեղծի գրական-հասարակական գործունեության նշանակությունը՝ Չոպանյանը ձգտում է նրան դուրս հանել իր ժամանակի սահմաններից և որպես հայրենասիրության, քաղաքացիական բարձր ոգու լավագույն օրինակ՝ ներկայացնել ժամանակակիցներին՝ նպատակ ունենալով նրանց ներշնչել բարոյական վեհ ու ազնիվ զգացումներ, բարձր հայրենասիրական նպատակասլացություն: Կնշանակի՝ Պեշիկթաշլյանին անդրադառնալով՝ Չոպանյանը նպատակ ուներ ոչ միայն հայ գրականության համաստեղության խոշոր ներկայացուցիչներից մեկին վեր հանել, որը ինքնին անհրաժեշտ էր ու շահեկան, այլև նոր սերնդին «հրահանգիչ ու ազնվացուցիչ» զգացումներ ներարկել, քանի որ Մ. Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը «դաս մը կարող է ըլլալ ապագայ սերունդներուն»[2]:

Մկ. Պեշիկթաշլյանի ստեղծագործական հասունացումը զուգադիպեց 19-րդ դարի 50-ական թվականներին Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցող տնտեսական-քաղաքական այն մեծ տեղաշարժերին, որոնք սկսվել էին դեռ դարի առաջին կեսերից: Սուլթանական լծի տակ տառապող ժողովուրդների պայքարը, ներքին խռովությունները, այնուհետև նաև արտաքին քաղաքականության ճակատներում կրած պարտությունները թուրքական կայսրությանը ստիպեցին գնալ տնտեսական-քաղաքական փոփոխությունների: Թուրքիայի կյանքում տեղի ունեցած լուրջ տեղաշարժերը արձագանք գտան ինչպես թուրքական գերիշխանության տակ գտնվող ազգերի, այնպես էլ Կ. Պոլսի և ընդհանրապես Տաճկահայաստանի քաղաքների հայկական շրջաններում: Հայ հասարակական-մշակութային կյանքը բռնկվեց մի իսկական ազգային երկունքով՝ արթնանալով «լեթարիական քունէն»:

Պեշիկթաշլյանը դարձավ իր սերնդի տրամադրությունների լավագույն թարգմանը՝ սեփական ստեղծագործությամբ ու անձնական գործունեությամբ նպաստելով հայ նոր, առաջադիմական շարժումների կազմակերպմանն ու զարգացմանը: Ժամանակի հասարակական-քաղաքական, մշակութային լավագույն գործիչների՝ Ստ. Ոսկանյանի, Հ. Սվաճյանի, Ն. Ռուսինյանի, Գր. Օտյանի և այ-

---

[1] **Չօպանեան Ա.**, Մկրտիչ Պէշիկթաշլեանի կեանքն ու գործը, Փարիզ, 1907, էջ Ե-Զ (Ներածութիւն):

[2] Տե՛ս **Դալլաքյան Կ.**, Արշակ Չոպանեան, Եր., 1987, էջ 213:

լոց շարքում նա բարձրացավ իբրև ամենից հատկանշական դեմքը՝ իր կարևոր նպաստը բերելով հատկապես գեղարվեստի, ազգային գրականության զարգացման և «հայ սրտերուն» ազգային միասնության դավանանքը ներարկելու մեծ գործին, նկատում է Զոպանյանը[1]*։*

1850–60-ական թվականների սերնդի առաջավոր գործիչների, նրանց շարքում հատկապես Պեշիկթաշլյանի գործունեության բարձր գնահատումը Զոպանյանի համար անշուշտ վեր էր սովորական շարադրանքի նշանակությունից։ Երկրորդելով պիտի ասել, որ գրականագետը այդ շարադրանքից դուրս հետապնդում էր ավելի հեռուն միտող նպատակներ, որոնք կապվում էին իր օրերի հետ և մղված էին պատմական անցյալի անձնուրաց դեմքերի ու նրանց հերոսական գործունեության օրինակով ոգեշնչել ժամանակակից սերնդին, վերջինիս մեջ զարգացնել ազգային ինքնաճանաչողության ու ինքնագիտակցության զգացումը, նրան դաստիարակել օտարի լուծը թոթափելու վճռական ոգով, պատրաստել ազգային-ազատագրական գործին նվիրված խիզախ հայրենասերներ։

Նույն նպատակով Զոպանյանը հանգամանորեն կանգ է առնում նաև Պեշիկթաշլյանի մանկավարժական-հասարակական գործունեության մանրամասների վրա։ Իսկ խոսելով 1862 թվականին Զեյթունի ապստամբության օրերին բանաստեղծի ծավալած գործունեության մասին՝ Զոպանյանը գրում է. «Պէշիկթաշլեանի ընթացքը այդ ծանրակշիռ պարագային մէջ, իր բացայայտ խանդավառ համակրութիւնը Զէյթունի հերոսներուն համար, իր մտերմական յարաբերութիւնները Զէյթունի Պոլսոյ ներկայացուցիչներուն հետ, ցոյց կուտան որ այդ թաւիշէ ու մետաքսէ հոգիին մէջ պողպատէ խորք մը կար, և թէ ան կը սիրէր քաջութիւնը ոչ միայն երգերու մէջ ու թղթի վրայ, այլ մանաւանդ գործի մէջ»[2]*։ Այս առումով Պեշիկթաշլյանը դարձյալ տալիս էր լավագույն օրինակը։*

Պեշիկթաշլյանի թատերգությունները գնահատելիս ուսումնասիրողը դարձյալ շեշտը դնում է հեղինակի ստեղծագործական այն արժանիքների վրա, որոնք հետապնդում էին նույն՝ ազատասիրական ու լուսավորական նպատակները։ Թատրոնը, ինչպես նկատում է գրականագետը, բանաստեղծի համար նաև լավագույն միջոց էր՝ ատելություն արթնացնելու ազգային կրոնական պառակտումների նկատմամբ, որոնք երկար դարեր իրենց վայրագ գժտություններով քայքայում էին ազգային միասնությունը, «հայ ազգին հոգւոյն ու մարմնոյն փաթթուած»՝ քամում նրա արյունը. «Հայ բեմը հիմնելու գինքը մղող ամենէն

---

[1] Տե՛ս **Զօպանեան Ա.**, Մկրտիչ Պէշիկթաշլեանի կեանքն ու գործը, Փարիզ, 1907, էջ 31։

[2] **Զօպանեան Ա.**, Մկրտիչ Պէշիկթաշլեանի կեանքն ու գործը, Փարիզ, 1907, էջ 71։

էական շարժառիթներէն մին՝ կրթիչ ու հայրենաշունչ ներկայացումներով ամէն դաւանանքէ Հայեր քով քովի բերելու, միևնոյն «ազգային» զգացման մէջ զանոնք իրարու հետ կապելու տենչն էր»[1]:

Պեշիկթաշլյանի՝ առանց որևէ կրոնական-դավանաբանական խտրության հայությանը մեկ «միասնական ազգային զգացման մէջ» միավորելու ձգտումը համարելով բանաստեղծի հանրային գործունեության ամենածանոթ կետը՝ Չոպանյանը անհրաժեշտ է գտնում ոչ միայն ներկայացնել պոլսահայ անցուդարձերը, հատկապես կրոնադավանաբանական պայքարը, այլև տալ հայոց մեջ կաթոլիկության առաջացման պատմությունը, որոնց և նվիրված է գրքի ծավալի գրեթե կեսը: Այս հանգամանքը հուշում է, որ գրականագետը նպատակ ուներ Պեշիկթաշլյանին ներկայացնել որպես կաթոլիկական ու լուսավորչական պառակտումի հաշտեցման մեծագույն պաշտպան ու գովերգու, ուստի և նրա աշխատանքը ձևավորվել ու շարադրվել է հենց այդ կանխադրույթով, այդ տեսակետով: Չոպանյանը ձգտում է ապացուցել, որ Պեշիկթաշլյանի գրական-հասարակական գործը հիմնականում եղել է կաթոլիկ և լուսավորչական հայության դավանաբանական պառակտումի հաշտեցման ճիգ, ձգտում՝ «բոլոր Հայերը եղբայր ու գործակից դարձընել ազգային մտաւոր յառաջադիմութեան գործին մէջ»: Եվ ամենևին պատահական չէ, որ գրականագետը Պեշիկթաշլյանի ստեղծագործության մի ծանրակշիռ մասը իր բովանդակությամբ բխեցնում է հենց այդ մտայնությունից[2] և գրողի «Եղբայր եմք մեք» երգով է գնահատում նրա հասարակական ամբողջ գործունեությունը. «Եղբայր եմք մեք» երգին մէջ է որ Պէշիկթաշլեան խտացուց գերագոյն արտայայտութիւնը իր բոլոր այդ ազնիւ զգացմանց... «Եղբայր եմք մեք»ը հայկական միութեան Մարսէյեզը եղաւ... Այդ երգը ելեկտրականացուց հայ սրտերը, հալեցուց սառոյցը որ դեռ կը մնար հռովմէական ու լուսաւորչական Հայոց միջև, ամենէն սիրական, ամենէն յաճախ երգուած երգը դարձաւ, ամէն երեկոյթի, ժողովքի, հանդէսին մէջ հնչեց ու հոգիներուն վրայ խաղաղութեան, եղբայրութեան, սիրոյ արև մը քաղցրաշող ծագեցուց»[3]:

Հանգամանորեն ծանրանալով հատկապես 19-րդ դարի առաջին կեսին Պոլսում և մյուս հայաշատ շրջաններում լուսավորչական ու կաթոլիկ հայերի,

---

[1] Նույն տեղը, էջ 71:

[2] Տե՛ս **Սաֆարյան Վ.**, Մկրտիչ Պեշիկթաշլյան, Եր., 1972, էջ 46: Սույն մենագրության մեջ ընդհանրապես հեղինակը բազմաթիվ գրականագիտական, պատմաբանասիրական հարցերում՝ կապված բանաստեղծի ստեղծագործական ժառանգության ու գործունեության հետ, իր անհամաձայնությունն է հայտնում Ա. Չոպանյանի տված գնահատականներին ու բնութագրումներին: Այդ հարցերը, ինքնըստինքյան կարևոր ու հետաքրքիր լինելով հանդերձ, չեն մտնում մեր այս հոդվածի նպատակների մեջ:

[3] **Չօպանեան Ա.**, Մկրտիչ Պէշիկթաշլեանի կեանքն ու գործը, Փարիզ, 1907, էջ 205-206:

մասնավորապես «Հակահասունեան կուսակցութեան» և Հասունյանի ու «Հասունեաններու պէս այլանդակ Հայերի» ընդհարումների և դրանց ծանր հետևանքների նկարագրության վրա՝ Զոպանյանը թերևս ավելի շուտ ձգտում է անցյալի պատմական իրողություններն իրենց դասերով ու ստացած գնահատականներով առավելապես օգտագործել ներկա օրերի համար՝ այդ կերպ պատմությանը տալով արդիական գաղափարախոսության նշանակություն։ Ճիշտ է, դավանաբանական վեճերը Զոպանյանի ժամանակ, ինչպես և ինքն է խոստովանում, բավականին թուլացել էին, սակայն «կրօնական մոլեռանդութեան» այդ «հին թոյնը» դեռ բոլորովին չէր ջնջվել։ Ուստի միանգամայն հասկանալի է այդ խնդրի հետ կապված պատմական դասերի վրա շռայլորեն ծավալվելու գրականագետի միտումը և դավանաբանական պառակտումների վերացման գործում թե՛ Պեշիկթաշլյանի, թե՛ նրա նախորդների և հաջորդների կատարած մեծ գործի հանգամանալից նկարագրությունը։

Այսպես, ազգային զարթոնքի, ազգի համախմբման պահանջով Զոպանյանը հանձնարարում է բոլոր այն դասերը, ինչ հնարավորություն էր տալիս Պեշիկթաշլյանի հասարակական գործունեությունն ու ստեղծագործությունը։ Այսօր էլ ազգային միասնության, ոգու առողջության ու մաքրության խնդիրները մեր իրականության մեջ պահպանում են իրենց կենսական հրատապությունը։ Դրսևորման բնույթով ու ձևով տարբեր, բայց էությամբ հաճախ նույնանման դավանաբանական բազմաթիվ խնդիրներ էր հետապնդում մեր հասարակությանը, երբեմն առաջ բերում պառակտումներ։ Այդ իմաստով թե՛ Պեշիկթաշլյանի անձն ու գործը, և թե՛ նրա գործունեությանը Արշակ Զոպանյանի տված գնահատականները իրենց իդեալային արժեքով մնում են նույնքան արդիական, որքան Պեշիկթաշլյանի ժամանակ, որքան քսաներորդ դարասկզբին։

«ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ»։

Վաչագան Ավագյան

Բանալի բառեր՝ *Արշակ Զոպանյան, Մկրտիչ Պեշիկթաշլյան, բանասիրություն, գրականագետ, հասարակական-քաղաքական, արևմտահայություն, հայրենասիրություն, Թուրքիա, դավանանք, մշակույթ, ազգային ինքնաճանաչողություն, լուսավորություն, կրոնադավանաբանական պայքար, կաթոլիկություն, լուսավորչականություն, գաղափարախոսություն։*

Իր «Մկրտիչ Պեշիկթաշլեանի կեանքն ու գործը» ուսումնասիրության մեջ Արշակ Զոպանյանը, պատմաբանի ու գեղագետի լայն հայացքով ներկայացնելով 1850-60-ական թթ. արևմտահայ գրական-հասարակական կյանքի ներքին տեղա-

շարժերը, ոչ միայն նորովի բացահայտում է ժամանակի ազգային զարթոնքի դարաշրջանը, այլև գրողի ու ազգային մեծ գործչի անձնական ու հասարակական կենսագրությանը տված բնութագրումների միջոցով հայտնաբերում է ժամանակների կապը, նրա կյանքի ու ստեղծագործության գործնական-գեղարվեստական և բարոյական դասերը ժամանակակից սերնդի համար: Մկ. Պեշիկթաշլյանին ներկայացնելով որպես կաթոլիկական ու լուսավորչական պառակտումի հաշտեցման մեծագույն ջատագով՝ Ա. Չոպանյանը ձգտում է անցյալի պատմական իրողություններն իրենց դասերով ու ստացած գնահատականներով առավելապես օգտագործել ներկա օրերի համար՝ այդ կերպ պատմությանը տալով արդիական գաղափարախոսության նշանակություն: Այդ դասերն ու գնահատականները իրենց իդեալային արժեքով մնում են նույնքան արդիական, որքան անցյալում:

“ОЦЕНКА АРШАКА ЧОПАНЯНА НАЦИОНАЛЬНО-ОБЩЕСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ МКРТИЧА ПЕШИКТАШЛЯНА”.

Вачаган Авагян

Ключевые слова: *Аршак Чопанян, Мкртич Пешикташлян, филология, литературовед, общественно-политический, западные армяне, патриотизм, Турция, вероисповедание, культура, национальное самосознание, просвещение, религиозная борьба, католицизм, армяно-григориянское вероисповедание, идеология.*

В своем исследовании “Жизнь и деятельность Мкртича Пешикташляна” Аршак Чопанян, с точки зрения историка и искусствоведа представляя внутренние изменения 1950-60-ых годов в литературно-общественной жизни западных армян, не только по-новому раскрывает эпоху национального пробуждения того времени, но и с помощью харастеристик данных личной и общественной биографии великого автора и национального деятеля выявляет связь времен, нравственнуе уроки его жизни и творчества для современного поколения. Представляя М. Пешикташляна как главного поборника за примирение раскола между католичеством и армяно-григориянством, А. Чопанян стремится, главным образом, использовать исторические события прошлого с их уроками и полученными оценками для нынешних дней. Таким образом, он стремится дать истории значение актуальной идеологии. Эти уроки и оценки с их идеалистичными ценностями остаются такими же актуальными, как и в прошлом.

“ARSHAK CHOPANYAN’S ASSESSMENT TO THE NATIONAL-SOCIAL ACTIVITY OF MKRTICH PESHIKTASHLEAN”.

Vachagan Avagyan

Keywords: *Arshak Chopanyan, Mkrtich Peshiktashyan, phylology, literaly critic, social-political, western Armenians, patriotism, Turkey, creed, culture, national self-knowing, enlightenment, relegious-creed struggle, Catholicism, Gregorian, ideology.*

Arshak Chopanyan in his “Life and Activity of Mkrtich Peshiktashlean” research work represents the internals moves of western Armenian literal-social life of 1850-60 with wide view, and not only reveals the epoch of the national arousal of that period in a new way, but also reveals the connection of the periods through descriptions of the given personal and social biography of the writer and a national great figure, and the practical-fictional and moral lessons of his life and works for the contemporary generation. By representing Mk. Peshiktashyan as the greatest apologist for reconciliation of Catholic and Orthodox split, A. Chopanyan attempts to use the historical events with its lessons and acquired assessments for the most for the present day, and in that way has given the meaning of modern ideology to the history. These lessons and assessments remain with their ideal values as modern, as it was in the past.